

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Անդրանիկ Զորավար



شماره ۱۸۴ اسفند ماه ۱۳۹۲ No 184, February 2014 2014 թ. Փետրվար # 184

Այս համարում

Հայերեն բաժին

1- Իրանահայ Համայնք.....	1
2- Հայաստան.....	1
3- Արցախ.....	5
4- Արեւմտյան Հայաստան.....	6
5- Միջազգային.....	11
6- Խոհեր.....	17
7- Գծանկարչություն.....	17
8- Հայերեն-պարսկերեն առաձանի.....	17

Պարսկերեն բաժին

1- Լուրեր.....	1-3
----------------	-----



Շապիկի առաջին էջում՝ Անդրանիկ Չորավար

Վերջին էջում՝ Լույս է տեսել էր. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 184, փետրվար 2014 թ.

No. 184, February 2014

ماهنامه لویس - شماره ۱۸۴ اسفند ماه ۱۳۹۲

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատավաճառ - 5000 ռիալ

Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

Անդրանիկ Չորավար Օգանյան 1865-1927



• Կյանքի ծովն է պեկոծվում խելագար,
Վերը՝ փրփուր, մարգարիտը վարն է հար,
Իմ ազգի ծով, հրաբխվի՛ր անդադար,
Գոնե բացվե մաքուր մի լույս, Անդրանիկ:
— Հովհաննես Շիրազ

• Իբրև արժիվ սավառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք-գետին տենչավառ,
Սուրբ անունդ պիտի հիշվի՛ր դարեդար,
Հսկա լերինք քեզ ապաստան Անդրանիկ:
- Աշոտ Շերամ

Քաղվածքներ Ամեն հայ եթե միմիայն իրեն համար
ապրելու մասին չմտածեր, մեր աղետներու մեծ մասը
պակաս կ'ըլլար:

• Ես իմ կյանքում երբեք չեմ ձգտել անձնական
երջանկության ու բարօրության: Ես մշտապես
ձգտել եմ միայն մի բանի և պայքարել եմ միայն մի
բանի՝ իմ հարազատ ժողովրդի ազատության և
բարեկեցության համար: Ես չեմ փնտրում իմ
վաստակի գնահատականը և ցանկանում եմ միայն
այն, որ երջանիկ լինի այն ժողովուրդը, որին ես
ծառայում եմ ամբողջ կյանքում:

• Ամեն օր գլուխներդ բարձին դնելուց եւ
քնանալուց առաջ, հիշեք, թե այդ օրը ինչ եք արել ձեր
ազգի համար:

• Իմ կուսակցությունն իմ ազգն է:

• Իմ ազգը ճնշվածների ազգն է:

• Մահս չեմ հոգար, այլ գործս, որ կիսատ մնաց:

Իրանահայ Համայնք

Հայաստան

Հայոց Ցեղասպանության 100-ամեակին նվիրված «Talk show»՝ Նոր Ջուղայում

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՓՅՈՒՆՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՄԱՍՈՒԼԻ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

21/02/2014

Իրանահայեր



Հայոց Ցեղասպանության 100-ամեակին նվիրված ծրագրերի շրջագծում, ուրբաթ, փետրվարի 7-ի երեկոյան, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միությունում, համատեղ նախաձեռնությամբ «Ռուբին» Երիտասարդական միության եւ «Արարատ» միության Ուսանողական միության, տեղի ունեցավ «Talk show»՝ «Հայ երիտասարդը եւ ազգային զարգացում» թեմայով:

«Talk show»-ի ծրագիրը վարեցին՝ Լեռնիկ Ղազարեանը, Լալազե Իսաղուլեանը եւ Ռուբին Խոսրովեանը:

Ծրագրի ընթացքում քննարկեցին Հայաստանի Հանրապետությանն առնչող մի շարք խնդիրներ, որոնց շարանում էին պետության գոյատևման հիմնահարցը, երկրի բնակչության թվի նազույժը, տնտեսական իրավիճակը եւ տեխնոլոգիայի զարգացումը: Այս բոլոր թեմաները ներկայացվեցին պաստառի վրայ ցուցադրող պատկերներով եւ օտար երկրների կացության հետ համեմատության դրելով:

Իւրաքանչիւր թեմայի յաջորդում էին սրահում ներկայ երիտասարդների անձնական տեսակետներն ու մեկնաբանությունները եւ առկա խնդիրների ու խոչընդոտների վերացման ուղղությամբ առաջարկները: Նրանք միաձայնությամբ հաստատեցին, որ պետականության գոյատևման համար՝ անհրաժեշտ է ունենալ՝ տնտեսական կայուն իրավիճակ, զինուժ եւ հզոր կամք, իսկ բնակչության թվի աճի կապակցությամբ բոլորը յանգեցին այն եզրակացության, որ պետք է պետական մակարդակով յատուկ աջակցություն ցուցաբերել բազմազան ընտանիքներին եւ հարկ եղածը նախաձեռնել նման ընտանիքների ստեղծման ուղղությամբ՝ չմոռանալով նաեւ արտագաղթի թափը կտրելու համար՝ երկրի քաղաքական եւ տնտեսական բնագաւառներում բարեփոխումների կիրառումը:

Առաջարկներ հնչեցին նաեւ երկրի տնտեսական զարգացման ուղղությամբ, իսկ վերջում քննարկեց հայապահպանման հիմնահարցը:

Հայոց լեզվի դասավանդման նպատակով կստեղծվի վիրտուալ հեռուստադպրոց

Փետրվարի 18-ին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունեց ՀՀԸՄ կենտրոնական վարչական ժողովի անդամ Վազգեն Յակոբյանին և ՀՀԸՄ հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչներին:

Խոսելով հայկական Սփյուռքի առջև ծառայած մարտահրավերների մասին՝ նախարար Հրանուշ Հակոբյանն առաջնային համարեց հայոց լեզվի ուսուցումը, պահպանումը և տարածումը՝ որպես հայ ինքնության պահպանման միակ առիավատյալ: Հյուրերին ներկայացվեց նաև այս ուղղությամբ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող լեզվի դասավանդման, ուսուցիչների վերապատրաստման ծրագրերը:

Հանդիպման ընթացքում քննարկվեց մայրենի լեզվի ուսուցման նպատակով ՀՀԸՄ-ի հետ համատեղ սփյուռքի նախարարության կողմից վիրտուալ հեռուստադպրոցի ստեղծման հարցը: Նախատեսվում է հեռահար ուսուցմամբ մայրենին հասանելի դարձնել հայկական Սփյուռքի տարբեր համայնքներին: Հայոց լեզուն դասավանդվելու է օտար լեզվի հիմքով: Ծրագիրը նախատեսված է լեզվի իմացության տարբեր մակարդակների համար՝ հաշվի առնելով առանձին երկրներում լեզվի ուսուցման պահանջարկը և նախատեսված է 10 տարեկան և ավելի մեծ տարիքի երեխաների համար: Դասընթացն իրականացվելու է ինտերակտիվ մեթոդով ուսուցողական վարժությունների միջոցով: Այն հեռուստադպրոցի աշակերտների հարցերին օն-լայն պատասխանելու, շփման, կարծիքները փոխանակելու և քննարկելու հնարավորություն է ընձեռում:

Ավելի ուշ նախատեսվում է նաև կազմակերպել արևմտահայերենի ուսուցում: ՀՀԸՄ ներկայացուցիչների հետ քննարկվեցին նաև ծրագրի իրականացման տեխնիկական, կազմակերպական այլ հարցեր:

Ռոբերտ Քոչարյանը՝ Մաքսային միությանն անդամակցելու մասին

[2rd.am-ը](#) ներկայացնում է ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի պատասխանը դեռևս անցած տարվա դեկտեմբերին ուղարկված մեր հարցաշարի հերթական հարցին: Խնդրո առարկան Մաքսային Միությանը Հայաստանի անդամակցության թեման է:



24 Փետրվարի 2014թ.

Անկեղծ ասած, մենք ակնկալում էինք պարզել Ռոբերտ Քոչարյանի կարծիքը նաև մեկ այլ թեմայի՝ Մահմանադրական բարեփոխումների վերաբերյալ: Մակայն, ինչպես մեզ տեղեկացրեցին 2-րդ նախագահի գրասենյակից, այս հարցի վերաբերյալ առայժմ գրեթե հնարավոր չէ առարկայական տեսակետ հայտնել թեմայի վերաբերյալ հրապարակային տեղեկատվության սակավության պատճառով: Հուսով ենք, որ ժամանակի ընթացքում այդ բացը կլրացվի, և մենք կտեղեկանանք նաև այդ հարցի վերաբերյալ Ռոբերտ Քոչարյանի տեսակետին:

-Պարոն նախագահ, հետաքրքիր է իմանալ Ձեր կարծիքը Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի Մաքսային Միությանը՝ Հայաստանի անդամակցության վերաբերյալ:

- Թեման չափազանց կարևոր է, բայց դրա էությունը հասկանալու համար պետք է ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանում ու Ռուսաստանում իրագործվող մաքսային քաղաքականության մոտեցումների համեմատական վերլուծություն կատարել: Սկսեմ Ռուսաստանից:

Ռուսաստանը ԽՍՀՄ-ից ժառանգեց գործնականում տնտեսության բոլոր ոլորտներն ընդգրկող հզոր արդյունաբերական ներուժ՝ ռազմաարդյունաբերական համալիրի վրա արտայատված շեշտադրումով: Բայց այդ ներուժը ինտեգրված չէր համաշխարհային տնտեսությանը և գերակշիռ մեծամասնությամբ պարփակված էր ներքին շուկայում ու սոցիալիստական ճամբարի երկրներում: ԽՍՀՄ արտահանման հիմնական հողվածը /65 տոկոս/ կազմում էր նավթի ու գազի արտահանումը: Որպեսզի պաշտպանի իր տնտեսությունը ավելի մրցունակ ներմուծումից, Ռուսաստանը կիրառում էր բարձր մաքսատուրքեր, իսկ ներքին շուկայի ծավալները թույլ էին տալիս գործել նրա արդյունաբերությանը: Կիրառելով արտահանման տուրքեր և քվոտաներ էներգակիրների արտահանման վրա՝ կառավարությունը պահպանում էր դրանց ներքին ցածր գները, ինչը պահում էր ռուսական տնտեսության որոշակի մրցունակությունը: Իմիջիայլոց, դա թույլ տվեց խուսափել այն կոլապսից, որ տեղի ունեցավ Հայաստանի տնտեսության հետ 90-ական թվականների սկզբին: Այժմ, անդամակցելով Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը, Ռուսաստանը համաշխարհային

տնտեսությանը լիարժեքորեն ինտեգրվելու համար աստիճանաբար վերանայում է արտաքին առևտրի կանոնները: Դա կարճաժամկետ հեռանկարում որոշակի դժվարություններ կստեղծի, սակայն երկարաժամկետ առումով երկիրն անկասկած շահելու է: Իսկ ի՞նչ կատարվեց Հայաստանում: Մենք ժառանգեցինք լուրջ արդյունաբերական ներուժ՝ կողմնորոշված դեպի ԽՍՀՄ շուկա, որն արդեն գոյություն չուներ: Ներքին շուկայի ծավալներն այդ արդյունաբերության համար չնչին էին, իսկ մի շարք ոլորտների համար՝ պարզապես գրոյական: Ռուսաստանի հետ ընդհանուր սահմանի և երկպառակային հաղորդակցության բացակայությունը ի չիք էր դարձնում նախկին կոոպերացիայի վերականգնման ջանքերը: Ռուսական տնտեսության մի շարք ոլորտների աղետալի վիճակը 90-ականների կեսերին նույնպես լավատեսություն չէր ավելացնում: ԽՍՀՄ փլուզման հետ մեկտեղ Հայաստանի արդյունաբերության զգալի մասը անմիջապես դարձավ էքսպորտային՝ ավանդական վաճառահանման շուկայի և տեխնոլոգիական կոոպերացիաների գծով գործընկերների կորուստի պայմաններում: Ըստ էության, բացի գյուղատնտեսությունից ու վերամշակու-մից, արդյունաբերության բազմաթիվ ճյուղերի պաշտպանությունը մաքսա-տուր-քերով անիմաստ էր: Հովանավորչությունը կարող էր արտահայտվել բոլորովին այլ գործիքների կիրառմամբ, բայց ոչ մաքսային արգելքներով: Գումարեք դրան նաև Հայաստանի շրջափակումը, որը բերում էր տրանսպորտային ծախսերի թանկացման գրեթե բոլոր ապրանքատեսակ-ների համար: Այդ պատճառով էլ ՀՀ կառավարությունը 90-ականների կեսերին գնաց արտաքին առևտրի ազատականացման, և Հայաստանը մտավ ԱՀԿ 2003թ. համաշխարհային տնտեսության մեջ լիարժեք ինտեգրացիայի գործընթացն արագացնելու համար:

Այսպիսով, Հայաստանն ու Ռուսաստանը, օրյեկտիվ հանգամանքներից ելնելով, երկար ժամանակ մաքսային քաղաքականության մեջ տարբեր մոտեցումներ էին իրականացնում, և այդ մոտեցումները մեր երկրների մաքսային օրենսգրքերի հիմքը դարձան: Իսկ քանի որ Մաքսային Միության մոտեցումներում ընկած է ՌԴ մաքսային օրենսգիրքը, հարց է առաջանում, թե ի՞նչ խնդիր է լուծում Հայաստանն իր տնտեսության համար՝ բարձրացնելով մաքսատուրքերը ռուսաստանյան մակարդակի, և կհաջողի՞ արդյոք անցնում վերափոխել իր մոտեցումները:

Այս հարցում ես չեմ կիսում մեր պաշտոնատար անձանց լավատեսությունը, քանի որ տնտեսությունը իներցիոն բնույթ ունի, և կտրուկ շրջադարձերն այստեղ հակացուցված են: Մարդիկ տարիներով կառուցում են իրենց բիզնեսը գործող կանոնների տրամաբանությամբ, և այն վերահարմարեցնելու համար ժամանակ է հարկավոր: Ակնհայտ է, որ բիզնեսի որոշ տեսակներ կբարելավեն իրենց դիրքերը, որոշները կտուժեն, իսկ

որոշները՝ ուղղակի կմեռնեն: Անհրաժեշտ է խորը և բիզնեսի համար բաց վերլուծություն ՄՄ երկրների շուկաների բոլոր ապրանքային խմբերի գծով կանխատեսելու համար բոլոր հնարավոր հետևանքները: Գործարարներն ու ֆերմերները պետք է իմանան, թե որ ճյուղերում են իրենց դժվարություններ սպասում, և հակառակը՝ որում իրենք կարող են ավելացնել իրենց հնարավորությունները: Դա կօգնի նաև բանկերին ու վարկային կազմակերպություններին՝ ավելի արդյունավետ և փոքր ռիսկայնությամբ տնօրինել ֆինանսական ռեսուրսները: Բացի այդ, ամենայն հավանականությամբ, Եվրամիությունը Հայաստանի հետ առևտրում կվերանայի արտոնությունների համակարգը (GSP+), ինչի մասին արդեն ակնարկում են ԵՄ երկրների ղեկավարները: Հարցեր կառաջանան նաև ԱՀԿ շրջանակներում արդեն պայմանավորված մաքսատուրքերի փոփոխության վերաբերյալ, ինչից դժվար թե հաջողվի խուսափել: Դա կբերի մեր ապրանքների նկատմամբ պատասխան միջոցների կիրառմանը: Թե ինչպես դա կազդի Հայաստանի տնտեսության և մեր երկրի երկարաժամկետ ներդրումային գրավչության վրա՝ դժվար է գնահատել: Մեկ այլ արդեն բարձրաձայնված խնդիր. ՄՄ շրջանակներից դուրս գտնվող երկրներից ներմուծվող ապրանքների գների բարձրացումը: Հաշվի առնելով սպառողական շուկայում այդպիսի ապրանքների գերակայությունն ու Հայաստանի առևտրային բալանսի դեֆիցիտի մակարդակը՝ խոսք է գնում բավականին էական ծավալների մասին: Այստեղ բանաձևը շատ պարզ է. բարձրացում էս մաքսատուրքերը՝ բարձանում է նաև ապրանքի գինը խանութում: Կամ էլ տեղի է ունենում այդ ապրանքների փոխարինումը համանման ապրանքներով՝ Մաքսային Միության անդամ երկրներից, եթե այդպիսիք այնտեղ արտադրվում են: Օրինակ, ասենք, Բելառուսի մսամթերքները և կաթնամթերքները կարող են էժանանալ Հայաստանում, իսկ մեր գինին ու կոնյակը՝ Բելառուսում: Ինչպես և կղիմանա այս մրցակցությանը մեր անասնապահությունը, ցույց կտա ժամանակը: Այլ երկրներից ներմուծվող կենցաղային տեխնիկայի, էլեկտրոնիկայի ու մեքենաների զգալի մասը կթանկանա, եթե չլինեն համապատասխան բացառություններ: Այստեղ ամեն ինչ հնարավոր է հաշվարկել և կանխատեսել, և այդ հաշվարկները պետք է մատչելի լինեն հասարակությանը: Գների էական ավելացումը կարելի է զսպել միայն ներդնելով բացառությունների ծավալուն ցուցակ, ներդաշնակելով այն ԱՀԿ առջև Ռուսաստանի ստանձնած պարտավորությունների շրջանակում մաքսային գանձումների աստիճանական նվազեցման հետ: Իսկ դա կախված է անցկացվելիք աշխատանքային բանակցությունների արդյունքներից՝ ՄՄ բոլոր երկրների հետ, որոնք էլ իրենց հերթին կներկայացնեն փոխադարձ պահանջներ: Դա շահերի համաձայնեցման աշխատատար գործընթաց է, և շտապողականությունը

կարող է հանգեցնել անցանկալի հետևանքների: Ես գիտակցաբար կանգ չեմ առնում այն բանի վրա, թե Հայաստանի համար ինչ վարկանիշային կորուստներով սկսվեց միացումը Մաքսային Միությանը՝ տարակուսանքի առիթ դառնալով մեր եվրոպացի գործընկերների համար: Դա այլևս չես շտկի: Չարժեք գնալ ԵՄ-ի հետ Ասոցիացման համաձայնագրի ստորագրմանը ՎՈՒԱՄ-ի երկրների ընկերակցությամբ, այն էլ ակտիվ քարոզչությամբ: Դա գործընթացին ավելորդ աշխարհաքաղաքական երանգ հաղորդեց: Ռուսաստանի արձագանքը միանգամայն կանխատեսելի էր: Այսպես թե այնպես՝ ունենք այն, ինչ ունենք: Ցանկալի է, որ անդամակցությունը Մաքսային Միությանը ընթանա հանգիստ, լինի նվազագույնս քաղաքականացված և առավելագույնս հաշվի առնելով երկրի տնտեսության երկարաժամկետ շահերը: Ցանկացած սխալ հաշվարկ բացասական հետևանքներ կունենա Հայաստանի բոլոր բնակիչների համար: Հ. Գ. Նրանց, ովքեր չեն կարող տեղի-անտեղի չարտահայտվել, առաջարկում եմ ուշադիր կարդալ, որպեսզի չստացվի այնպես, ինչպես միշտ: **HayNews.am**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԸ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Է ԸՆՏՐԵԼ

NEWS.am -- Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի կիրակնօրյա հերթական պլենումում ձայների մեծամասնությամբ կուսակցության նոր ղեկավար կազմ է ընտրվել :

Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար է ընտրվել Տաճատ Սարգսյանը, որը նախկին ղեկավար Ռուբեն Թովմասյանի հրաժարականից հետո կատարում էր կուսակցության ղեկավարի պարտականությունները: Երկրորդ քարտուղար է ընտրվել Կենտկոմի երիտասարդական քաղաքականության հարցերով քարտուղար Երջանիկ Ղազարյանը :

Կենտկոմի նոր քարտուղարներ են դարձել Սպանդարյանի շրջանային (Երեւան) եւ Կիրովականի (Վանաձոր) քաղաքային կուսակցական կազմակերպությունների ղեկավարներ Դոնարա Նալբանդյանը եւ Անդրանիկ Ղուկասյանը :

NEWS.am-ի տեղեկություններով՝ Կենտկոմի մի քանի անդամներ, Լենինականի քաղկոմի ղեկավար, Գյումրիի նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանի նախկին առաջին տեղակալ Գագիկ Մանուկյանի գլխավորությամբ, կտրականապես դեմ են արտահայտվել առաջադրված թեկնածուներին, ադմուկ բարձրացրել: Սակայն Կենտկոմի անդամների ճնշող մեծամասնությունը նրանց չի աջակցել :

Կոմկուսի Կենտկոմի նիստում որոշվել է նաև նախապատրաստվել հերթական համագումարին :

Մարտ-Ապրիլ ամիսներին տեղի կունենան սկզբնական կուսակցական կազմակերպությունների հաշվետու-ընտրական կոնֆերանսները, իսկ Մայիս-Հունիսին՝ մարզային եւ քաղաքային կոմիտեներինը, որից հետո Կենտկոմը կնշանակի համագումար:

ԶՕՐԱՎԱՐ ԱՆՊՐԱՆԻԿԻ ԾՆՆԴՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁ

Զորավար Անդրանիկ Օզանյանի ծննդյան 149-րդ տարեդարձի առթիվ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը եւ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանը մի շարք այլ պատասխանատուների եւ բարձրաստիճան զինվորականների ընկերակցությամբ այցելեցին Եռապլուրի պանթեոն, ուր հարգեցին մեծ գորավարի հիշատակը:

Տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ Անդրանիկի եւ հայ ազգային ազատագրական պայքարի բոլոր նահատակների հոգիների հանգստության համար: Քաղաքապետն ու պաշտպանության նախարարը նաեւ ծաղիկներ զետեղեցին սպարապետ Վազգեն Մարգարյանի եւ այլ նահատակների շիրիմներին: Մարգարյանն ապա այցելեց Անդրանիկի թանգարան եւ ներկա գտնվեց հիշատակի հանդիսությանը:

Եվրամիությունը շարունակում է աջակցել Հայաստանում կինոկապերագրության զարգացմանը



23 Փետրվարի 2014 - 11:35

«Ուսուցում վավերագրական ֆիլմերի միջոցով» մեթոդի կիրառում Հայաստանի դպրոցներում, Հարավային Կովկասում անցկացված վավերագրական ֆիլմերի 15 փառատոն, որից հինգը Հայաստանի տարբեր մարզերում, ստեղծվեց մոտ 30 ֆիլմերից բաղկացած հանրային ֆիլմադարան, «Կինոյի մասին» օրենքի շուրջ քննարկումների վերսկսում. ահա այն հիմնական ձեռքբերումները, որոնք արձանագրվել են «Մարդը կարիքի մեջ» (People in Need) չեխական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության (ՄԿՄ) եւ «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Խոսենք ֆիլմերի մասին Հարավային Կովկասում/CAUCADOC» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն արդեն երկու տարի է, ինչ Հայաստանում է: Ըստ «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի տնօրեն Նունե Մարգարյանի՝ CAUCADOC-ի տարբեր բաղադրիչները հնարավորություն տվեցին բացահայտելու եւ կիրառելու կինոկապերագրության ողջ պոտենցիալը թե որպես կինոարվեստի ճյուղ, թե որպես

ուսուցման եւ իրազեկման միջոց, թե որպես տարածաշրջանային եւ միջազգային համագործակցության համար հարթակ: Կինոգետ Բաֆֆի Մովսիսյանն էլ անդրադարձավ ծրագրի շրջանակներում տեղի ունեցած քննարկումներին եւ Հայաստանում ֆիլմարտադրության ոլորտի արդի խնդիրների եւ զարգացման հնարավոր ուղիների ուսումնասիրության արդյունքներին: Ըստ այդմ, առանձնացվեց կինոյի մասին օրենսդրության անկատարությունը, որը նաեւ միջազգային փորձագետների եզրակացությունում էր նշված: CAUCADOC-ի շրջանակներում, ի դեպ, ստեղծվում է հարավկովկասյան վավերագրական ֆիլմերի առցանց կատալոգ, որը, մասնագետների գնահատմամբ, Հարավային Կովկասի ֆիլմերը հասանելի կդարձնի ողջ աշխարհում:

Նշենք, որ ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության Արեւելյան համագործակցության մշակութային ծրագրի (Eastern Partnership Culture Program) եւ Չեխիայի զարգացման համագործակցության (Czech Republic Development Cooperation) կողմից: HayNews.am

«France-Presse». Առաջին համաշխարհային պատերազմ. Հայոց ցեղասպանության ու պաղեստինյան հակամարտության աղբյուրները



Փետրվար 25, 2014 | 06:35

Առաջին համաշխարհային պատերազմը մեկ դար անց եվրոպական պայքարից հեռու ստվեր է նետում: Ժառանգությունը երկու ճգնաժամերն են, որոնք դեռ բարդացնում են միջազգային հարաբերությունները՝ իսրայելա-պաղեստինյան հակամարտություն ու Հայոց ցեղասպանություն, գրում է «France-Presse»-ն իր հոդվածում:

«Վստահ լինելով իր դաշնակից Գերմանիայի հաղթանակում՝ Օսմանյան կայսրությունում իշխող երիտթուրքերը պատերազմում իրենց իշխանությունն ամրապնդելու եւ Կենտրոնական Ասիայում տարածելու հնարավորություն տեսան:

Օսմանյան բանակը բրիտանական ու ֆրանսիական զորքերի հանդեպ Գալիպոլի թերակղզում 1915թ.-ին լուրջ հաղթանակ տարան, սակայն պատերազմը Ռուսաստանի դեմ արեւելյան ճակատում նրա համար իսկական սարսափ էր: Հայկական զորքերը պատերազմում էին ռուսների հետ՝ փորձելով տասպալել օսմանյան տիրապետությունը:

Օսմանյան կայսրության պատասխանը հարձակումն էր հայկական ազգային փոքրամասնությունների վրա: «Երկուսից մեկը՝ կամ հայերը կոչնչացնեն թուրքերին, կամ թուրքերը հայերին», - իր հուշերում գրել է Մեհմեդ Ռեշիդը: «Կանգնելով ընտրության առաջ՝ երկար չեմ մտածել: Նախքան նրանք մեզ կոչնչացնեն, մենք ինքներս կազատվենք նրանցից»:

Ստամբուլում 1915թ.-ի ապրիլի 24-ին հայ համայնքի 2 հազար առաջնորդների ձեռքակալությունն ու կոտորածը սկիզբ դրեց 20-րդ դարի առաջին ցեղասպանությանը, թեև այժմյան թուրքական իշխանությունները հրաժարվում են հիշատակել այդ բառը: Մեկ տարուց էլ քիչ ժամանակահատվածում հարյուր հազարավոր հայեր տեղահանվեցին, նրանց ունեցվածքը խլեցին, շատերին սպանեցին: Մեկ դար անց այս իրադարձությունները շարունակում են լարված պահել Թուրքիայի եւ Արեւմուտքի հարաբերությունները:

Հայերը, ում աջակցում են շատ պատմաբաններ ու օտարերկրյա խորհրդարաններ, հայտարարում են, որ մինչև 1.5 մլն հայեր պարբերաբար կոտորածի էին ենթարկվում Օսմանյան կայսրության կողմից: Թուրքիան ընդունում է զանգվածային սպանությունների փաստը, սակայն անվանում է դա ինքնապաշտպանություն ռուսական վտանգի առաջ: Նրա տվյալների համաձայն՝ մարտերում զոհվել է ավելի քան 500 հազար մարդ:

Հայ գիտնական Ռուբեն Սաֆրաստյանը հեքքում է թուրքական եզրակացությունները: « Առաջին Համաշխարհայինից առաջ էլ են հայերի կոտորածներ տեղի ունեցել: Այն պարզապես առիթ հանդիսացավ հանցավոր ծրագիրն իրագործելու համար», - հայտարարում է նա: «ՄԵԳ համար հարցը նույնքան ցավալի է, որքան 100 տարի առաջ: Թուրքիան պետք է է վերջ տա ժխտողականության քաղաքականությանը եւ ներողություն խնդրի հայ ժողովրդից», - հայտարարում է Էդուարդ Շարմազանովը:

Թուրքիայում աստիճանաբար փոփոխություններ են տեղի ունենում. Երբ անցյալ տարի Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն այցելեց Երեւան, նա 1915-1916թթ. իրադարձությունները «սխալմունք» ու «անմարդկային գործողություններ» անվանեց: «Վերջին տարիներին Թուրքիայում ոգեկոչման արարողություններ, համալսարանական կոնֆերանսներ տեղի ունեցան: Մա փոքրիկ հեղափոխություն է», - հայտարարել է թուրք վերլուծաբան Բուրկու Գյուլթեքին-Փունջմանը: Նրա խոսքով՝ թուրք հասարակության շրջանում արդեն վերանայման գործընթաց է սկսվել, նույնիսկ էթե քաղաքական մակարդակում այն չի երեւում»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Արցախ

Լոս Անջելեսի քաղաքային խորհուրդը միաձայն ընդունել է բանաձև, որով ճանաչել է Լեռնային Ղարաբաղը՝ որպես անկախ և ինքնիշխան պետություն

Միացյալ Նահանգների հայաշատ Լոս Անջելեսի քաղաքային խորհուրդը միաձայն ընդունել է բանաձև, որով ճանաչել է Լեռնային Ղարաբաղը՝ որպես անկախ և ինքնիշխան պետություն: Բանաձևը ներկայացրել է Լոս Անջելեսի խորհրդի հայազգի անդամ Փոլ Գրեգորյանը: Այս փաստաթուղթը, որ ընդունվել էր դեռ 2013 թվականի սեպտեմբերին, և միայն անցած շաբաթ է պաշտոնապես փոխանցվել Միացյալ Նահանգներում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանին, գալիս է լրացնելու ամերիկյան Ռոդ Այլենդ, Մասաչուսեթս, Մեյն, Լուիզիանա, Մերիլենդ նահանգներում, Ֆրեզնո քաղաքում և այլուր ընդունված նմանօրինակ բանաձևերի և հռչակագրերի շարքը:

Լոս Անջելեսի Քաղաքային խորհուրդը բանաձևում պատվաբեր է համարել ճանաչել անկախ և ինքնիշխան Արցախի Հանրապետության գոյությունը, կարևորվել է և այն, որ Արցախը, անկախ իր կարգավիճակից, հազարավանակների փառահեղ պատմություն ունի և իր արժանի տեղն է զբաղեցնում հայ ժողովրդի պատմության և մշակույթի մեջ:

Բանաձևում նշվում է, որ Արցախի Հանրապետությունն իր անկախությունը հռչակել է 1991 թ. դեկտեմբերի 10-ին՝ երկար պայքարից հետո, որը շարունակվում է նաև այսօր: Լոս Անջելեսի Քաղաքային խորհուրդը գտնում է, որ Արցախի ինքնորոշման պահանջը ոգեշնչել է տարածաշրջանում ապրող բազմաթիվ ժողովուրդների: Բարձր է գնահատվում այն, որ վերջին երկու տասնամյակների ընթացքում Արցախի Հանրապետության ժողովուրդը հաստատականություն ու տոկունություն է ցուցաբերել պատերազմի, կոտորածների, տնտեսական զրկանքների և այլ հսկայական դժվարությունների հանդեպ:

Լոս Անջելեսի Քաղաքային խորհուրդը հատկապես կարևորում է քսան տարուց ավել իր քաղաքացիների հանդեպ արդար և հավատարիմ լինելու Արցախի Հանրապետության ջանքերը, որով պահպանել է իր անկախությունը և նպաստել Կովկասյան տարածաշրջանի քաղաքական մտածողությունն ու իրավիճակը փոխելուն: Նշվում է, որ Արցախում անցկացնում են ազատ ու անկախ ընտրություններ և հանրաքվեներ:

2012 թ. ապրիլի 24-ին Լոս Անջելեսը բարեկամական հարաբերություններ է հաստատել Արցախի Հանրապետության Շուշի քաղաքի հետ,

Ընդունելով բանաձև՝ Լուս Անջելեսի Քաղաքային խորհուրդը հավաստում է, որ Լուս Անջելեսի իր հարգանքն է արտահայտում Արցախի Հանրապետության ու նրա քաղաքացիների հանդեպ և արժանին է մատուցում Արցախի Հանրապետության ժողովրդին՝ ծայրահեղ դժվարություններին դիմակայելու վճռականության համար:

Ի վերջո բանաձևում խորհուրդը Լուս Անջելեսի անունից Արցախի Հանրապետությանն ու նրա քաղաքացիներին մաղթում է խաղաղություն, բարգավաճում և շարունակական հաջողություններ ու կոչ է անում միջազգային հանրությանը ըստ արժանվույն ճանաչել Արցախի Հանրապետությունը՝ որպես ազատ, անկախ և ինքնիշխան պետություն:



Նշենք, որ Ամերիկահայ քաղաքական գործիչ, բանաձևի հեղինակ, Լուս Անջելեսի քաղաքային խորհրդի անդամ Փոլ Գրիգորյանը ծնվել է 1960թ. մարտի 24-ին, Սան Ֆերնանդոյում:

Կրթությունը ստացել է Ռեսեդայի Կլիվլենդ ավագ դպրոցում, ապա Հարավային Կալիֆոռնիայի համալսարանում, այնուհետև ավարտել է Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարանի իրավաբանության բաժինը:

Շուրջ 20 տարի աշխատել է որպես իրավաբան:

2006թ-ին Գրիգորյանն ընտրվել է Կալիֆոռնիայի նահանգային խորհրդի անդամ: 2006-2009թթ. Կալիֆոռնիայի խորհրդի կողմից ընտրվել է արդյունաբերական ձեռնարկությունների պահպանման կոմիտեի ղեկավար:

2009թ-ին Փոլ Գրիգորյանը ընտրվել է Լուս Անջելեսի երկրորդ շրջանի քաղաքային խորհրդի ղեկավար: Նա նման պաշտոն զբաղեցնող առաջին ամերիկահայն է:

Որպես Նահանգային խորհրդի անդամ՝ Փոլ Գրիգորյանը նախաձեռնել է «Կառավարությունը ձեր դրան առջև» շարժումը, որի շրջանակներում նրա աշխատակիցները այցելել և ծանոթացել են իրենց տարածքի ավելի քան 3000 ընտանիքների խնդիրներին:

Հաշվի առնելով խորհրդում նրա գործունեությունը՝ Փոլը նշանակվել է նաև Բրբանկ քաղաքի կրթական խորհրդի ղեկավար:

2013թ. սեպտեմբերին Փոլ Գրիգորյանը Կալիֆոռնիայի նահանգային և Լուս Անջելեսի քաղաքային օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչների հետ այցելել է ԼՂՀ, Ստեփանակերտում պատվիրակությանն ընդունել է ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը:

Հայ ժողովուրդը իրավունք ունի հպարտանալու Փոլ Գրիգորյանի նման արժանավոր զավակներով:

Արեւմտյան Շայաստան

Թուրքիայում Սեւան Նիշանյանին տեղափոխել են խստացված ռեժիմի բանտ



Փետրվարի 27, 2014

Թուրքական դատարանի կողմից 2 տարի ազատազրկման դատապարտված ստամբուլահայ հայտնի լեզվաբան Սեւան Նիշանյանին Թուրքալիի թեթև ռեժիմով բաց բանտից տեղափոխել են ավելի խիստ ռեժիմով փակ բանտ:

Նույնիսկ բանտում հայ լեզվաբանին հանգիստ չսվող թուրքական իշխանությունները, նախ Սեւան Նիշանյանի դեմ նոր հետաքննություն են սկսել այն բանի համար, որ նա գրել է բանտում գողություն կատարած մի բանտապահի մասին, այնուհետ առաջին հարցաքննությունից հետո նրան տեղափոխել են Բուջայի փակ բանտ:

Թուրք հայտնի գրող Ազիզ Նեսինի որդին՝ Ալի Նեսինը հայտարարել է, թե Սեւան Նիշանյանին լրացուցիչ պատժում են կրեղիտ քարտ գողացող բանտապահին բացահայտելու համար: Նա բոլորին կոչ է արել պայքարել Սեւան Նիշանյանի իրավունքների համար:

Նշենք, որ 2013-ի դեկտեմբերի վերջին վճռաբեկ դատարանը հաստատել էր դեռևս 2008-ին Իզմիրի Սելչուքի շրջանի քաղաքացիական գործերով դատարանի կայացրած վճիռը Սեւան Նիշանյանի նկատմամբ:

Սեւան Նիշանյանը բանտում անցկացնելու է 2 տարի՝ անօրինական շինարարություն իրականացնելու համար: Նշենք, որ Սեւան Նիշանյանը Հայոց ցեղասպանության մասին մշտապես բարձրաձայնել է Թուրքիայում եւ աչքի է ընկել իր անվախ պահվածքով:

Վանի Բերկրիի ջրվեժի շքեղ լուսանկարը Թուրքիայում տարվա լուսանկար է ճանաչվել



Փետրվարի 25, 2014

Թուրքիայի ֆոտոթղթակիցների միության կողմից կազմակերպված «Տարվա լավագույն լուսանկարներ» մրցույթում հաղթող լուսանկարների մեջ է հայտնի լուսանկարիչ Ալի Իհսան Օզթուրքի կողմից արված Վանի Բերկրիի ջրվեժի լուսանկարը:

Թուրքիայում «Տարվա լավագույն լուսանկարներ» մրցույթին մասնակցել են 4 հազար 381 լուսանկար: Մրցույթի ամփոփումից հետո ժյուրին հայտնել է, որ 6 անվանակարգերում մրցանակ են ստացել 22 լուսանկար: «Հատուկ մրցանակ» պարգևեին է արժանացել հայտնի լուսանկարիչ Ալի Իհսան Օզթուրքը կողմից գիշերով արված Վանի Բերկրիի ջրվեժի լուսանկարը: Լուսանկարչին աշխատել է Canon 5D Mark 3 լուսանկարչական ապարատով: Նա հրաշք կադրը ստանալու համար գործի է անցել երեկոյան 19:30-ին եւ միայն 02:30-ից մինչև 03:30-ը ընկած մեկ ժամվա մեջ արել հիշյալ կադրը:

Canon 5D Mark 3-ի հատուկ հնարավորությունների շնորհիվ կարողացել է մեկ ժամ լուսանկարում անել, որի արդյունքում ստացված կադրում շատ պարզ տեսնում ենք աստղերի շարժը՝ իրենց հետագծերով: Նշենք, որ Բերկրիի ջրվեժը (ներկայում անվանվում է Մուրադիյե) գտնվում է Բերկրի գետի վրա, որն իր հերթին սկիզբ է առնում Թոնդրակ լեռից, հոսում Վասպուրականի լեռներին զուգահեռ, անցնելով 65 կմ տարածություն եւ թափվում Վանա լիճը: Բերկրիի ջրվեժը գտնվում է Վան քաղաքից 90 կմ հեռավորության վրա:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Գեզի այգու տարածքից հայտնաբերված հայերի տապանաքարերը տեղափոխվել են Շիշլիի գերեզմանատուն

Փետրվարի 22, 2014 թ.

Ստամբուլի Թաքսիմի հրապարակի վերակառուցման ծրագրի շրջանակներում շինարարության ժամանակ Գեզի այգու տարածքից հայտնաբերվել էին հայկական գրություններով տապանաքարեր, որոնք

համապատասխան ստուգումներից հետո տեղափոխվել են Շիշլիի հայկական գերեզմանատուն:

Ստամբուլի հայկական «Ակոս»-ի փոխանցմամբ՝ Գեզի այգում հայտնաբերված Սուրբ Հակոբ գերեզմանատան տապանաքարերը հնագիտական թանգարանում ուսումնասիրության են ենթարկվել, որի ժամանակ հաստատվել է, որ դրանք 17-ից 19-րդ դարերի տապանաքարեր են:



Հնագիտական թանգարանում ուսումնասիրվելուց հետո տապանաքարաքարերը տեղափոխվել են Ստամբուլի Շիշլի թաղամասի հայկական գերեզմանատուն:

Նշենք, որ Գեզի այգու տարածքում մինչև 1939-ը եղել է հայկական Սուրբ Հակոբ գերեզմանատունը: 1939-ին պետության որոշմամբ քանդվել է գերեզմանատունը, որի տարածքի վրա կառուցվել է Գեզի այգին, «Դիվան» եւ «Հիլթոն» հյուրանոցները:

Թուրքիայում Սասունի քայմաքամն այցելել է հայ ընտանիքներին



Փետրվարի 22, 2014 թ.

Թուրքիայի Բաթման նահանգի Սասունի շրջանի քայմաքամ (շրջանի կառավարիչ-խմբ) Զիհաթ Արքքն այցելել է Չալըշըրլար գյուղում ապրող հայ ընտանիքներին:

Թուրքական «Անադոլու» գործողության փոխանցմամբ՝ Բաթման նահանգի Սասունի շրջանի քայմաքամ Զիհաթ Արքքը եւ շրջանի մուֆթու (կրոնական պատասխանատու-խմբ) Աբդուլհալըք Օջաքհանսողուն Չալըշըրլար գյուղի գյուղապետի ուղեկցությամբ այցելել են Չալըշըրլարում ապրող հայ ընտանիքներին:

Քայմաքաման ավելի ուշ հայտնել է, որ Չալըշըրլարում հանդիպել է մոտ 30 հայերի հետ, խոսել նրանց հետ: «Մեր հայ քաղաքացիների հետ մի սեղանի շուրջ զրուցեցինք: Այս այցը տվեց տարբեր ազգերի միմյան հետ ապրելու գեղեցկությունը», -ասել է Սասունի քայմաքամը:

Դինքի ընտանիքը սպանության գործով նոր հայց է ներկայացրել



Փետրվարի 21, 2014 թ.
Ստամբուլի հայկական «Ակոս»-ի նախկին գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանության գործով Դինքի ընտանիքի փաստաբանները նոր դատական հայց են ներկայացրել:

Թուրքական Gercekgundem կայքի փոխանցմամբ՝ Դինքի ընտանիքի փաստաբանների ներկայացրած դատական հայցում պահանջվում է պատասխանատվության ենթարկել Դինքի սպանության ծրագրավորման մասին իմացած Տրայիզոնի այն ժամանակվա ոստիկանապետ Ռամազան Աքյուրեքին եւ այլ բարձրաստիճան ոստիկանների:


Հիշյալ ոստիկանների դեմ դատական գործ հարուցելու համար ներկայացվել է Դինքի սպանության գործով Թուրքիայի նախագահի վերահսկիչ պալատի զեկույցը եւ սպանության ուղղորդողներից Էրհան Թունջելի վկայությունները:

Գրեթե միաժամանակ Թուրքիայի Սահմանադրական դատարանը որոշում է կայացրել Դինքի ընտանիքի անդամների դիմումի կապակցությամբ, պահանջելով լրացնել կիսատ փաստադրոյների եւ տեղեկությունների ցանկը: Դինքի ընտանիքը դիմել էր ՄԴ՝ նշելով, որ Դինքի սպանության բացահայտման գործում լիարժեք հետաքննություն չի իրականացվել եւ բարոյական փոխհատուցման համար պահանջել 500 հազար լիրա:

Թուրքիայում ազգայնականները 2 հայ թեկնածու են առաջադրել ընտրություններում

Ստամբուլի հայաբնակ Բաքըրքյոյի շրջանում ապրող հայերի քվեները առաջիկա ՏԻՄ ընտրություններում ստանալու համար բոլոր կուսակցությունները հայ թեկնածուներ են առաջադրել:

Թուրքական Haberler-ի փոխանցմամբ՝ մոտ 20 հազար հայ ընտրող ունեցող Բաքըրքյոյի շրջանում մարտի 30-ին տեղի ունենալիք ՏԻՄ ընտրություններից առաջ թե իշխող «Արդարություն եւ զարգացում» թե ընդդիմադիր «Ժողովրդա-հանրապետական», «Ազգայնական շարժում» եւ «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցությունները հայ թեկնածուներ են առաջադրել:



Փետրվարի 21, 2014թ.

Թուրքական կայքերն այս համատեքստում ուշագրավ են համարում «Ազգայնական շարժում» կուսակցության կողմից 2 հայ թեկնածուի ներկայացնելու փաստը:

«Ազգայնական շարժում» կուսակցության կողմից ներկայացված Բաքըրքյոյի քաղաքապետարանի ավագանու թեկնածուների ցուցակի առաջին եւ 5-րդ տեղերը զբաղցնում են Ներսես Երեմյանը եւ Էլմաս Կիրակոսը:

Ընդդիմադիր «Ժողովրդա-հանրապետական» կուսակցությունը Բաքըրքյոյում եւս 2 հայ թեկնածու է առաջադրել ավագանու ցուցակում՝ Արեւ Ջեբեջի եւ Մարգարիտ Դիքմե:

Իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունը նույն շրջանում ներկայացրել է 3 հայ թեկնածուի անուն՝ Լեռն Նորայ Օզանաթ, Անդրանիկ Շիրինսողլու եւ Անդրանիկ Դիքթաշ:

Ավելի վաղ նշել էին, որ «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցությունն էլ հենց Բաքըրքյոյի քաղաքապետի թեկնածու է առաջադրել ազգությամբ հայ Նվարդ Բաքըրջըրջոլուին:

Թուրքիայում հերթական հայ կինն է ներկայացվել քաղաքապետի թեկնածու

Փետրվար 20, 2014


Թուրքիայում մոտեցող ՏԻՄ ընտրություններին ընդառաջ հերթական հայ կինն է ներկայացվել քաղաքապետի թեկնածու:

Թուրքիայում նոր կազմավորված «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցությունը Հաթայ նահանգի Սամանադադի քաղաքապետի թեկնածու է առաջադրել ազգությամբ հայ Լոռա Բայթարին (Չափար): Լոռա Բայթարը 2013-ին ամուսնացել էր Թուրքիայի միակ հայկական գյուղի՝ Վազըֆի (Վաքըֆլը) Մուրբ Աստվածածին եկեղեցու խորհրդի նախագահ Ջեմ Չափարի հետ:



Մինչ այս, HDP-ն Ստամբուլի Բաքըրբոյի քաղաքապետի թեկնածու էր առաջադրել Նվարդ Բաքրոջոզոլունին: HDP-ն իր թեկնածուներին ներկայացնում է համանախագահության սկզբունքով, այսինքն, մեկ տղամարդ է մեկ կին: Պաշտոնապես ընտրվում է մեկը, սակայն ընտրվելու պարագայում կառավարումն իրականացվելու է համանախագահության սկզբունքով:

Թուրքական DurDe-ն հարգել է ԱՍԱԼԱ-ի մարտիկ Լեւոն Էքմեքչյանի հիշատակը



Հունվարի 29, 2014թ.

Թուրքիայում ազգայնականության եւ ռասիզմի դեմ պայքարող Irkçılığa ve Milliyetçiliğe DurDe («Ոչ ասենք ռասիզմին եւ ազգայնականությանը») նախաձեռնությունը ֆեյսբուքյան էջի միջոցով հիշատակել է ԱՍԱԼԱ-ի մարտիկ Լեւոն Էքմեքչյանի հիշատակը: DurDe-ի էջում տեղադրվել է Լեւոն Էքմեքչյանի լուսանկարը եւ ավելացվել. «1983, հունվարի 29: Խունտան մահապատժի ենթարկեց հայ հեղափոխական Լեւոն Էքմեքչյանին» գրությունը: Նշենք, որ 1982 թվականի օգոստոսի 7-ին ԱՍԱԼԱ-ի «Խրիմյան Հայրիկ» անձնասպան ջոկատը Անկարայի Էսենբոզայի օդանավակայանում իրականացրել է «Կարին» գործողությունը: Գործողության ընթացքում վիրավոր ձերբակալվել է Լեւոն Էքմեքչյանը, իսկ ջոկատի

հրամանատար Զոհրապ Սարգսյանն ինքնասպան է եղել, երբ զինամթերքը վերջացել է:

Թուրքական կայքը Անիի Մայր տաճարի 3D վիրտուալ տուրն է պատրաստել



Փետրվարիի 20, 2014թ.

Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող Հայոց Բագրատունի թագավորական դինաստիայի օրոք Հայաստանի մայրաքաղաք հանդիսացած Անիի Մայր տաճարի 3D վիրտուալ տուրը հայտնվել է ինտերնետում: Թուրքիայի պատմամշակութային հուշարձանների 3D վիրտուալ տուրերի նախագծմամբ հայտնի թուրքական 360Tr.com կայքը ներկայացրել է նաև Անիի Մայր տաճարի 3D տուրը:

Անիի Մայր տաճարի ներսից եւ դրսից 9 կետից արված լուսանկարներից ստացված վիրտուալ տուրի ընթացքում կարելի է մկնիկի օգնությամբ մանրակրկիտ նայել եկեղեցին եւ նրա շրջակայքը, այդ թվում հնարավոր նաև խոշորացնել կամ փոքրացնել կադրերը: Նշենք, որ Անիի Մայր տաճարը կառուցվել է 1001-1010 թվականներին, Գագիկ Բագրատու օրոք, Կատրամիդե թագուհու անմիջական հովանավորությամբ:

Թուրքիայում առաջին անգամ քաղաքապետարանի վրա հայերեն ցուցանակ են փակցրել

Փետրվարի 26, 2014

Դիարբեքիի Սուրի քաղաքապետարանի շենքի վրա փակցվել է 4 լեզվով ցուցանակ: Սուրի ներկայիս քաղաքապետ Աբդուլլահ Դեմիրբաշի նախաձեռնությամբ քաղաքապետարանի մուտքի մոտ փակցված ցուցանակի վրա թուրքերենով, քրդերենով, հայերենով եւ ասորերենով գրված է «Սուրի քաղաքապետարան»: Ավելի վաղ NEWS.am-ի թղթակիցը Սուրի քաղաքապետարան այցի ժամանակ նկատել էր, որ քաղաքապետարանի ցուցանակները թուրքերենով եւ քրդերենով էին եւ հարցրել էր քաղաքապետին, թե ինչու հայերենով գրություն չկա, երբ Սուրի շրջան մտնող ճանապարհներին կան հայերենով «Բարով եկաք» գրությունները, ինչին ի պատասխան Սուրի

քաղաքապետ Արդուլլահ Դեմիրբաշը խոստացել էր շտկել սխալը եւ ավելացնել նաեւ հայերենը:



Նշենք, որ Սուրի քաղաքապետ Արդուլլահ Դեմիրբաշը թուրքերենով եւ հայերենով հրատարակել է հայկական մի շարք հեքիաթներ, այդ թվում Թումանյանի «Մի կաթիլ մեղրը»: Դեմիրբաշի նախաձեռնությամբ նաեւ Դիարբեքիբը ներկայացնող տուրիստական ուղեցույցը տպագրվել է նաեւ հայերենով: Սուրի շրջան մտնող ճանապարհների մոտ դրված ցուցանակների վրա կա նաեւ հայերենով գրված «Բարի եկաք» գրությունը: Արդուլլահ Դեմիրբաշի նախաձեռնությամբ 2013-ի սեպտեմբերին Դիարբեքիբում տեղադրվել է Թուրքիայում կոտորված հայերի, քրդերի, ասորիների, հրեաների եւ եգիպտացիների հիշատակին նվիրված հուշարձան:



Լուրեր Հայաստանից - NEWS.am

«Today». ոչնչացող փառք. ուրվական քաղաք Անին

NEWS.am-ը զգալի կրճատումներով ներկայացնում է սինգապուրյան «Today» թերթում հրատարակված հոդվածը միջնադարյան Անի քաղաքի մասին, որն այսօր Թուրքիայի տարածքում է գտնվում:

Կանաչ դաշտերում ծաղկում են դաշտային ծաղիկներ, թռչունները սավառնում են անամպ երկնքում, շուրջը

թռչում են թիթեռներ են. այս ամենն Անին իդեալական է դարձնում: Սակայն հսկայական ավերակները վկայում են քառասյին անցյալի մասին:



Փետրվար 28, 2014

Ժամանակակից Թուրքիայի եւ Հայաստանի միջև ընկած Անին երբեմնի միջնադարյան Հայաստանի մայրքաղաքն էր ու Կոստանդնուպոլսի մրցակիցը: Այն վերածվել է մզկիթների, եկեղեցիների եւ գրադաշտական տաճարների հազվադեպ համարդրության: Անիում գտնվող շինությունների մեծ մասը, թվում է, դանդաղ կործանվում է. դրանց պահում են հազվադեպ հանդիպող մետաղյա հիմքերը: Առաջին հայացքից ավերակները փոքր են թվում: Սակայն երբ ավելի ես մոտենում, զարմացնում է դրանց լքված մեծությունը: Անիի տաճարը միջնադարյան հայկական ճարտարապետության փայլուն օրինակ է. դրա ավերված գմբեթը չի նվազեցնում է արժեքը: Սուրբ Գրիգորի եկեղեցին, կառուցված 1215թ.-ին Տիգրան Հոնենցի կողմից, որմնանկարներ ունի, որոնք պատկերում են Քրիստոսի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի եւ այլոց կյանքը: Երբ քայլում ես Անիի տարածքով, որտեղ պեղված դամբարաններն, տներ ու նույնսիկ բաղնիքներ կան, թաքնված մարգարիտի հայտանբերման տպավորություն է ստեղծվում, որն ավելի ազդեցիկ է դառնում լուրջությամբ, ամբոխի բացակայությամբ:

Ցեղասպանության ժառանգների քաղաքացիություն տալու օրինագիծ է ներկայացվել Թուրքիայի խորհրդարան



Փետրվարի 28, 2014

Թուրքիայի քրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» (BDP) կուսակցության ասորի

պատգամավոր Էրոլ Դոռան Թուրքիայի քաղաքացիության մասին օրենքում փոփոխություն կատարելու առաջարկով օրենսդրական փոփոխության նախագիծ է ներկայացրել երկրի խորհրդարան:

Թուրքական Demokrathaber կայքի փոխանցմամբ՝ ասորի պատգամավոր Էրոլ Դոռայի ներկայացրած օրինագիծը նախատեսում է քաղաքացիություն տալ 1915-ին, այն ժամանակվա կառավարության պաշտոնական հրապարակման հիման վրա իրականացրած տեղահանությունից հետո տարբեր պատճառներով քաղաքացիությունից զրկվածների ժառանգներին:

Էրոլ Դոռան ներկայացված օրինագծում պարզաբանել է, թե 1915-ից հետո տարբեր պատճառներով Թուրքիայի քաղաքացիությունից զրկված անձանց ժառանգներն ինչ պետք է ներկայացնեն Թուրքիայի քաղաքացիություն ստանալու համար՝ շեշտելով ցանկը. այն ժամանակաշրջանի անձնագրեր կամ անձը հաստատող փաստաթղթեր, եկեղեցու գրանցամատյանները, ազգային փոքրամասնությունների հիմնադրամների գրանցումները, նախկինում ապրած վայրերի մասին բանավոր պատմություններ, օսմանյան փաստաթղթերում անցնող անուններ, զինվորական գրանցումներ, նավի կամ այլ փոխադրամիջոցի տոմսեր, ամուսնության վկայականներ եւ Թուրքիայից այլ երկիր գաղթելու մասին տեղեկանք այդ երկրից:

Էրոլ Դոռան նշել է, թե հայ հայտնի արվեստի գործիչներ Վիլիամ Մարոյանը, Արամ Տիգրանը շատ էին ցանկանում թաղվել իրենց պապերի հողերում, սակայն նրանց նույնիսկ դա թույլ չտվեցին՝ շեշտելով, թե նոր օրինագծով ինչ-որ չափովի կշտկվի նման սխալները:

Միջազգային

Հայոց ցեղասպանությանը նվիրված սեմինար՝ Չեխիայի գիտությունների ակադեմիայում



Փետրվարի 28, 2014թ.

Պրահայում փետրվարի 27-ին, Չեխիայի գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության մասնաճյուղի հովանու

ներքո տեղի է ունեցել Հայոց ցեղասպանությանը նվիրված սեմինար:

Դասախոսությամբ հանդես է եկել հայագետ Պետրա Կոշտլարովան, ով մասնագիտացել է ոչ միայն հայոց պատմության, այլև հայ գրականության չեխերեն թարգմանության հարցերում:

Նա ներկայացրել է Հայոց ցեղասպանության պատմական ընթացքը, ցուցադրել լուսանկարներ, իսկ վերջում պատասխանել է նաև ներկա գիտնականների հարցերին:

ԱՄՆ-ն կկրճատի իր զորքերի քանակը



24 Փետրվարի 2014

ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Չակ Հեյգելը նախատեսում է կրճատել ԱՄՆ զինճառայողների քանակը և հասցնել այն Երկրորդ համախարհային պատերազմից առաջ եղած թվաքանակին, հաղորդում է New York Times-ը:

Նոր ծրագրի համաձայն՝ մի քանի տարվա ընթացքում ամերիկյան բանակը կկրճատվի մինչև 440 հազարի: Եթե դա տեղի ունենա, այն կլինի ամենափոքրը 1940 թ.-ից այս կողմ: Բացի այդ, Պենտագոնը նախատեսում է ազատվել մի շարք ռեակտիվ ինքնաթիռներից, որոնցից են A-10-ը և U-2-ը: HayNews.am

Նամակ Գերմանիայի երիտասարդական միությանը՝ Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչմանը նպաստելու համար



Փետրվարի 27, 2014թ.

«Օրինաց երկիր» կուսակցության Երիտասարդական Միության նախագահ Արմեն Գեորգյանը եւ Արտաքին քաղաքական կապերի պատասխանատու Էդգար Առաքելյանը նամակով դիմել են Գերմանիայի

երիտասարդական միությանը (Junge Union Deutschlands) Հայոց Ցեղասպանության վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու, Ցեղասպանության միջազգային ճանաչմանը եւ դատապարտմանը նպաստելու համար:

Նամակում մասնավորապես ասվում է. «Հարգելի պարոն Միսֆելդեր, թույլ տվեք մեկ անգամ ես շնորհակալություն հայտնել 2013թ. նոյեմբերի 15-17-ը Էրֆուրտ քաղաքում Գերմանիայի Երիտասարդական Միության կողմից կազմակերպված «Գերմանիայի օրվան» նվիրված համաժողովին հրավիրելու համար:


Որպես գործընկեր կազմակերպություն՝ մշտապես հետևում ենք Ձեր կառույցի գործունեությանը: Բնականաբար, մեզ հետաքրքրում են Ձեր երկրում տեղի ունեցող իրադարձությունները, մեր երկու երկրների միջև հարաբերությունների ընթացքը, համագործակցությունը երկկողմ ու բազմակողմ հարթություններում, ինչպես նաև Ձեր երկրի հարաբերությունները մեր գործընկեր եւ ոչ գործընկեր երկրների հետ: Այդ համատեքստում, հետաքրքրված ենք նաև Գերմանիայի եւ Թուրքիայի միջև հարաբերությունների ներկայիս ընթացքով, որը վերջին շրջանում ակտիվացել է ոչ միայն երկու երկրների առաջին դեմքերի, այլ նաև հասարակությունների անմիջական շփման մակարդակներում:

